


2-90

2004



631-44

ՅԻՍՈՒՍԻ ՎԱՐՈՒՅԸ

Հ Ե Մ Ե Ի Օ Տ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Գ Ա Ղ Ա Ի Ե Բ Ե Ն Ե Ն Թ Ա Բ Գ Մ Ե Ն Ե Ա

Dr. Proprietor



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՄԻ ԿԵՆՏՐՈՆԵԱՆ

= 1849 =

Handwritten mark resembling a stylized 'W' or 'V'.

ՅԻՍՈՒՄԻ ՎԱՐՈՒՅԸ
ՀԱՄԱՌՕՏ
ՊԵՏՐՈՒԹԻՒՆԸ

ԳԱՂԱԿԵՐԵՆԵՆ ԹԱՐԳՄԱՆԵԱԸ
Г. Мелконянцъ П. Дроздовскій
Decorative separator line.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. ՅԱԿՈՎԼԲԱՅ ՍՐԲԱԶԱՆ ՊԵՏՐՈՒՄԻ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

9374-57



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏԳԱՐԱՆԻ ԵՈՎԼԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ
= 1849 =

232.9

28-1077.9 40-100-18

20-2257-4

1 5 1 4 4 1 1 1 0 2 7 P

1 1 1 1 1 1 1 1 1 1 1

1 1 1 1 1 1 1 1 1 1 1

1 1 1 1 1 1 1 1 1 1 1

1 1 1 1 1 1 1 1 1 1 1

1 1 1 1 1 1 1 1 1 1 1



U.LIOP-107-1-22500P 4

1 1 1 1 1 1 1 1 1 1 1

= 6481 =

ՅԵՌԵՄԱՅԱՆ ԹԻՒՆ

Առաջիկայ փոքրիկ հատորիս մէջ պիտի տեսնենք, թեր Փրկիչ Յիսուսին վարուցը վրայօք՝ սուրբ Աւետարանի մէջ պատմուած անցքերուն շատերը ժողովուած, կարգի գրուած ու անընդհատ կերպով մը պատմուած իր ծնունդէն մինչեւ իր սուրբ յարութիւնը: Ասանկ գիրք մը թէպէտ ամէն քրիստոնէին պէտք է, բայց առաւել մանր տղայոց համար, որ իրենց Փրկչին վարքը գիտնալու պարտաւորած ըլլանուն, անիկայ թէ որ Աւետարանի մէջ կարգան, պատմուած դէպքերուն շորս Աւետարանին մէջ ցրուեալ ըլլալը՝ ու երբեմն ալ իրարու տարբեր երեւիլը՝ քիչ շատ տկար մտքերնին կը շփոթէ կամ գոնէ մտքերնին պահելը դժար կ'ըլլայ:

Տղայոց առջի տարիները՝ միտքերնին բանալու համար ասկէ աւելի յարմար գիրք մը չեմ գիտեր: Մէկ կողմէն, մէջը պատմուածներուն անշափ պարզութիւնը՝ իրենց Փրկչին վարքը միտքերնին տրպաւորելու օգնած տեղը, մէկալ կողմէն ալ, անոր կենացը սքանչելի դէպքերը անանց հետաքրքրութիւնը կ'արթնցնեն ու կը զարմացնեն: Ասանկ գիրք մը՝ որ աղայք իրենց են մատաղ հասակէն անանկ մեկու մը հետ պիտի ծանօթացնէ, որուն ծանօթու-


Թիւնը մարդուս յաւիտենական կեանք կուտայ, կար-
ծեմ երկար ջատագովութեան կարօտ չէ:

Միայն կը մտազթեմ Աստուծմէ, որ ասոր մէջի ե-
ղածնեբովը՝ ընթերցողին սրտին մէջ անանկ իղձ մը
վառէ, որով իրենց Փրկչին սրբութեանը ու կատա-
րելութեանը օրինակներուն հետեւելու ցանկան. ո-
րովհետեւ, աւանց անոր « Հիչ մէկը՝ չի սկիտի կըք-
նայ զինքը տեսնել »:

Ն . Մ . Զ .

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ի Ն

Ս ՈՒ Ր Բ Գ Ր Ո Յ



Ն ՈՐ Կ Տ Ե Կ Ը Ր Ը Ն

Գ Լ ՈՒ Խ Ա .

Ա լ զ Գ Ո Ւ Մ Ն ։

Երբ որ Ադամ ու Լուա Աստուծոյ
արատու իրանքին անհնազանդելով
մեղանջեցին , եղեմական դրախտէն
վրոնավեցան ու դատապարտուեցան
իրենք ալ իրենց զաւկրներն ալ աշ-
խատելու ու մեռնելու : Ալ անկէ ե-
տեւ յոյս չի կար աղէկ օրեր տեսնե-
լու , ոչ այս աշխարհի մէջ և ոչ երկին-
քը , ու մենք ալ մեր նախածնողացը
սէս՝ մեղքէ ու վիշտէ զառ բան մը
տեսնալիք չունէինք թէ՛ այս և թէ՛
յաւխտե՛նական կենաց մէջ : Բայց ան-
դժացաւ մեր վրայ , ու Ադամայ ե-

դեմական դրախտէն վաւրնտովելու դա-
տակնիքը տուած ժամանակէն՝ յայտ-
նեց անոր, որ ՓԲԿԻՉ մը պիտի գայ աշ-
խարհ, սատանային իշխանութիւնը
պիտի քակէ ու իր կեանքը մերինին
տեղ պիտի տայ, որով մենք մեզաց
Թողութիւն գտնենք :

Փրկչին գալուստը՝ չորս հազար
տարուան մէջ շատ անգամ գուշակ-
ուեցաւ սուրբ մարգարէներու բեր-
նով՝ որոնց Աճ յայտնեց, որ հոգևով
սրբով լեցուած մարդիկ էին և մար-
գարէ կ'ըսուէին, այսինքն անանկ մար-
դիկ որ սովորեալ կերպով չի գուշակ-
վելիք բաները՝ Աճ իրենց կը յայտնէ
ու անոնք ալ առաջուց մարդկանց կը
ծանուցանեն և ծանուցածնին ալ
կը կատարի : Ասանկ մարգարէներ շատ
ժամանակ առաջ գուշակեցին թէ ինչ
պէս և ուր պիտի ծնանի աշխարհի
Փրկիչը, և ինչպէս պիտի ըլլայ անոր
ծննդեանը՝ կենացը ու մահուանը գլխ-
խաւոր հանգամանքները : Աս մարգա-
րէներէն մէկը՝ որ Ասայի կ'ըսուէր, ը-

սած էր , թէ « Կոյսին մէկը՝ տղայ մը
պիտի ծնի » :

Արդ , տասներու թը դար առաջ Հը-
րէաստանի թագաւորը Հերովդէսին
ժամանակը՝ Աճ հրեշտակ մը խրկեց
Վալիլէայի՝ Ազարէթ ըսուած քաղա-
քը՝ կոյս աղջկան մը՝ որ Վաւթի ցե-
ղէն Յովսէփ անունով մէկուն նշան-
ուած էր և անունն ալ Վարիամ էր :
Հրեշտակը եկաւ ու ըսաւ անոր .
« Աղջոյն քեզի Վարիամ , որ շնորհօք
ըլեցուած ես , և կանանց մէջ ալ
որհնեալ ես , և տէրն ալ քու հետդ
է » : Սուրբ կոյսը երբոր աս խօսքերը
ըսեց՝ խռովեցաւ , վասն զի , կը մտմը-
տար թէ արդեօք ինչ պիտի ըլլայ այս
ողջոյնը : Հրեշտակը նորէն ըսաւ ա-
նոր . « Մի վախնար Վարիամ , դուն
Աստուծոյ հաճելի եղած ես , դուն
տղայ մը պիտի ունենաս ու անունն
ալ ՅԻՍՈՒՍ դնես : Անիկայ բարձրե-
լոյն որդին , Աստուծոյ որդին պիտի
ըսուի , ու անոր թագաւորութեա-
նը վախճան չի պիտի ըլլայ . Հոգին

Դուրս պիտի իջնայ քու վրագ, և զի
 Դիանաս որ Աստուած ամէն բանի
 Կարող է, ահա քեզի կ'իմացընեմ որ
 քու Աղիսաբեթ ազգականդ ալ իր
 աս ճերու թեամբը՝ տղայ պիտի բե-
 րէ ։ Այն ժամանակը Վարիամ ալ
 սրտասխանեց, «Ահա ես տիրոջը ա-
 ղախինն եմ, ինչպէս որ ըսիր անանկ
 թող ըլլայ» . ու հրեշտակն ալ գը-
 նաց քովէն ։

Աղիսաբեթը որ Վարիամին ազգա-
 կանն էր, Օսքարիա անունով քահա-
 նայի մը կնիկ էր . երկուքն ալ ճերա-
 ցեր էին, բնաւ զաւակ չէին ունե-
 ցեր և անկէց ետքն ալ ունենալու ալ
 յոյս չունէին ։ Արբոր որ մը Օսքա-
 րիա քահանան տաճարին մէջ խնկար-
 կու թիւն կ'ընէր Աստուծոյ առջին ու
 ժողովուրդն ալ ինչպէս որ սովորուի
 էր՝ դուրսի կողմը կայներ էր, սեղա-
 նին քով հրեշտակ մը տեսաւ, որ ի-
 բրե՛ն կ'ըսէր, թէ զաւակ մը պիտի ու-
 նենաս, ու անիկայ ՄԵՍԻԱՅԻՆ կարասպե-
 տը (բլավուղը) պիտի ըլլայ, այսինքն՝

անոր ճեռնդը սխախի խմայրնէ՝ ու աւ
նունը (Յովհաննէս սխախի դրուի : Օ) աւ
քարիս ալ սրատասխան տուաւ հրեշ-
տակին . « Ի սէս կրնայ բլլալ ատի-
նկայ . ես ծեր եմ , ու կրնա ալ իր
նասունը անցուցեր է » : Հրեշտակն
ալ ըսաւ . « Ես խրկուեցայ որ այս ա-
նուեախար քեզի տամ . դուն հիմա հա-
նմըր (տիլսիղ) սխախի բլլաս ու մինչև
նաս ըսածներս կատարուելու օրը չի
սխախի կրնաս խօսիլ , վասն զի դուն
նիմ խօսքիս չի հաւատայիր » :

Աս դին ալ ժողովուրդը Օ) քարիան
կ'սպասէր , ու անոր այնչափ ու շանաւ
լուն վրայ կը զարմանար . բայց երբ
որ դուրս ելաւ՝ չի կրցաւ խօսեր էր ,
նշաններով հասկըցուց թէ Աստուած
իրեն հրեշտակ մը ցրցուցեր էր . ետ-
քը իր տունը գնաց : յամանակէ մը
ետքը՝ Աղիսաբէթ յղացաւ ու կ'օրհ-
նէր զԱստուած :

Սարխամ իմանալով հրեշտակէն Աս-
տուծոյ կողմէն իր ազգականին եղած
չնորհքը , շուտ մը ելաւ այցելութե

գնաց . ու տունը մանալով՝ Լիդիա
բերթին ողջոյն տուաւ : Երբոր Լիդի
սաբերթ Վարիամու ողջոյնին ձայնը լը
սէց , Հոգւով սրբով լեցուեցաւ , որ
անոր հասկըցուց Վարիամու Աստու
ծոյ մայր ըլլալէբը . ուստի Լիդիսաբերթ
պօռաց . “ Իուն կանանց մէջ օրհնել
” մէկն ես , ու քու որովայնիդ պտուղն
” ալ օրհնեալ է . այս ինչ երջանկուի
” է ինձի որ Աստուծոյ մայրը իմ տու
” նըս կուգայ կօր երանի՛ անոր
” որ կը հաւատայ , վասն զի , ինչ որ
” տիրօջը կողմէն քեզի ըսուեցաւ՝ պի
” տի կատարուի ” :

Այն ժամանակը Վարիամ այս գե
ղեցիկ խօսքերը ըսաւ . “ Հոգիս կը
” փառաւորէ Տէրը՝ ու սիրտս ալ իմ
” Փրկիչ Աստուածովս ուրախութեամբ
” լեցուած է . վասն զի , անիկայ իր
” աղախինին խնարհութեանը հայե
” ցաւ . ասկէ ետեւ ամէն աղք ինձի
” երանի պիտի տայ , վասն զի , Աստ
” ուած մեծամեծ բաներ կատարեց իմ
” վրաս . սուրբ է իր անունը , ու իր

” ողորմուիլ յազգէ ազգ իրմէ վախ
” ցողներուն վրայ կը տարածի ” :

Սարխամ Աղիսաբեթի քով երեք
ամիսի չափ կեցաւ ու ետքը իր տու-
նը գնաց :

Անկէց ետքը երբոր քիչ մ'ալ ան-
ցաւ , Աղիսաբեթ զաւակ մը ծնաւ .
ազգականներն ու բարեկամները եկան
որ ուրախակից ըլլան անոր , և ուղե-
ցին որ աղին անունը հօրը սէս Օլա-
քարիա դրուի : Բայց Աղիսաբեթ չէ
կ'ըսէր , հասոյա անոր անունը (Յովհան-
նէս սիտի դրուի : Այբոր անոնք կը
զարմանային թէ ինչո՞ւ համար (Յով-
հաննէս գնել կ'ուզէ , (վասն զի , ի-
րենց ազգատոհմին մէջ այն անունով
մէկը չի կար) , Օլաքարիա քահանայն
նշաններով հասկըցուց որ իրեն թուղթ
բերեն , ու առաւ աս խօսքը գրեց .
“ Ատոր անունը (Յովհաննէս է ” : Ա-
սոր վրայ իսկոյն իր լեզուն ալ բաց-
ուեցաւ , սկըսաւ խօսիլ ու Աստուած
օրհնել . մարգարէացաւ ու իմացուց
Փրկիչը՝ որ Աստուած քիչ ատենէն աչ-

խարհի սխառի տար :

Այն ժամանակն ալ՝ Յովսէփին հրեշտակ մը երեւաց իր քունին մէջ ու ըսաւ . « Յովսէփ , Աաւիթին տը
ն զան , մի վախնար Վարիամը քու քովդ
ն առնելու , վասն զի , անկէ՛ ծնել լիբը՛
ն Հոգւով սրբով եղած է , անկէ՛ որդի
ն մը սխառի ծնի ու անունը Յիսուս սխ
ն աի դնես , որ Փրկի՛ջ ըսել է , վասն զի ,
ն անիկայ սխառի ազատէ իր ժողովուր
ն դը՛ անոնք իրենց մեղքերէն մաքրե
ն լով » :

Յովսէփ , քունէն արթննալուն սէս՝ Աստուծոյ հրեշտակին ըսածը կատարեց , ու իր քովը առաւ սուրբ կոյս Վարիամը :

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Մեղերն Յիսուսի երկրպագութեան գալը :

Հրեւոսն՝ ուր որ Յովսէփն ու սուրբ կոյս Վարիամը կը բնակէր , հըռովմայեցւոյ () գոտոս կայսեր իշխանութեան տակն էր , որ հրաման

հանեց աշխարհագիր ընելու, այսինքն
իր թագաւորութեան մէջ եղող բոլոր
մարդիկը համրանքի տակ առնելու :
Սուրբ Յովսէփն ալ գալիլէացւոյ՝ Նա-
զարէթ քաղաքէն ելաւ, որ Ռեթղէ-
հէմ ըսուած Վաւթի քաղաքը երթայ
ու սուրբ կոյս Վարիամին հետ աշ-
խարհագիրը մտնէ : Ռայց քաղաքը օ-
տարականներով այնքան լեցուն էր,
որ հարկադրեցան ախոռի մը մէջ բը-
նակիլ, վասն զի ուրիշ տեղ չկար իջե-
ւանին մէջ : Սուրբ կոյս Վարիամ հոն
ծնաւ այն սուրբ Վանուկը՝ որուն ծը-
նունդը հրեշտակը աւետեր էր : Ա-
նիկայ խանձարուքը պատեց ու ետքը
մսուրի (եէմլիբի) մը մէջ պառկեցուց :

Այն ժամանակը հոն տեղուները
հովիւներ կային որ իրենց ոչխարները
գիշերով կ'արածէին ու փոխանակաւ
(նէօլպէթալ) պահպանութիւն կ'ը-
նէին : Յանկարծ մը Աստուծոյ հրեշ-
տակը անոնց երեցաւ, երկնաւոր լոյս
մը անոնց վրայ ծագեց ու ահու գո-
ղի մէջ ինկան : Ռայց հրեշտակը անոնց

ըսաւ , « Մի վախնաք , ես ձեզի աւել
» տիս մը պիտի տամ որ բոլոր ժողո
» վըրդեան մեծ ուրախու թեան սրատ
» ճառ պիտի ըլլայ . դիտցէք որ այսօր
» Դաւթի քաղաքին մէջ ձեզի Փրկիչ
» մը ծնաւ , որ Տէրն ու Քրիստոսն
» է : Անիկայ խանձարուրներու մէջ
» պատած՝ մտուրի մէջ պառկեցու
» ցած է . այս նշանով անիկայ պիտի
» ճանչնաք » : Այն վայրկեանին լու
» ուեցաւ որ հրեշտակայ բազմութի
» ները կ'օրհնէին զաստուած ու կ'ըսէ
» ին : « Փառք 'ի բարձունս Աստուծոյ ,
» եւ յերկիր խաղաղութիւն » : Արբոր
» հրեշտակները երկինքը քաշուեցան ,
» հովիւները մէկզմէկու ըսին : « Այլէք ,
» Տեթղէհէմ , նայինք ինչ եղեր է ե
» ինչ կը ցըցընէ կոր տէրը մեզի » :
» Շուտ մը եկան Վարիամն ու Յով
» սէփը գտան , ու փոքրիկ Վանուկը մը
» սուրին մէջ դրուած : Այլ երբոր ա
» սանկ ստուգեցին Յիսուս մանկանը
» վրայօք իրենց ըսուածները՝ դարձան
» իրենց ոչխարներուն քով՝ զԱստուած

փառաւորելով ու օրհնելով, և տե-
սածնին ամէնուն ալ կը պատմէին: Այլ
որ այս բանը հովիւներուն բերնէն կը
լսէր, զարմանալով մտիկ կ'ընէր, իսկ
Սարիամ կոչսը՝ աս եղածները իր մէ-
ջը պահելով, ինքնիրեն վրանին կը
խորհէր:

Օ՛ննդենէն ութ օր ետքը՝ ման-
կան անուներ Յիսուս դրուեցաւ, ինչ-
պէս որ հրեշտակը ըսեր էր անոր մօրը:

Յիսուս Ռեթղէհէմի մէջ ծնած
ըլլալուն՝ արեւելքէն եկած մողերը
Երուսաղէմ հասան: Աս մողերը խմա-
տուն ու խիստ խելացի մարդիկ էին,
ու Փրկչին գալուստը գուշակող մար-
դարէն թիւններուն ալ ծանօթ էին:
Ասոնք Երուսաղէմ հասան՝ հարցընե-
լով թէ ո՞ւր է հրէից նոր ծնած թա-
գաւորը: «Անոր աստղը մենք արե-
ւելք տեսանք, ու եկանք որ անոր
ներկրպագութիւն ընենք»:

Հերովդէս թագաւորը՝ լսելով մո-
գերուն աս խօսքերը՝ խռովեցաւ, վի-
ղի, վախցաւ որ չըլլայ թէ այս նոր

Թագաւորը դայ իր իշխանութիւնը
բառնայ : Աւստի ժողովեց բոլոր քա-
հանայապետները՝ ու անոնց հարցուց
Թէ ո՞ւր պիտի ծնի Քրիստոսը : Անոնք
ալ ըսին , Թէ մարգարէ՛ններուն դու-
շակութեանը նայելով՝ Բեթղէհէմին
մէջ պիտի ծնի : Այն ժամանակը՝ Հե-
րովդէս մագերը կանչել տուաւ . ըս-
տուգեց անոնցմէ աստղին ծնած ժա-
մանակը՝ ու անոնք Բեթղէհէմ իրը-
կելով ըսաւ . « Գացէ՛ք , զգուշութի-
նովնտրուեցէ՛ք այն տղան , ու երբոր
դ գտնաք , ինձի ալ իմացուցէ՛ք , որ ես
ալ դամ անոր երկրպագուի ընեմ » :

Սոքերը անկէ զատուեցան , և
այն աստղը՝ որ արեւելք տեսեր էին ,
անոնց գէմը ելաւ , անոնց ճամբայ
ցրցուց ու մինչեւ եկաւ տղուն եղած
տեղին վրայ կայնեցաւ : Ասիկայ տես-
ներով ուրախութեամբ լեցուեցան ,
ու ներս մտնելով՝ տղան տեսան իր
մօրը Վարիամին հետ , ու անոր երկր-
պագութիւն ըրին . ետքը , գանձեր-
նին բացին անոր ընծայ ըրին ոսկի ,

Էնդրուկ ու զմուռս : Անկէց տքը՝
Աստուած անոնց քունին մէջ իրենց
պատուիրեց որ մէյմ՝ ալ Հերովդէսի
քով չի դառնան , ուստի ուրիշ ճամբ
քով մը իրենց հայրենիքը դարձան :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

ՅԻՍՈՒՍԻ ՆԳԻՒԿՈՍ ԻՒԻՎԼԸ :

5
1
7
5
5

ՅԻՍՈՒՍԻՆ ճնանելէն քառասուն օր
ետքը՝ Յովսէփ ու Վարիամ Յիսուս
սը Արուսաղէմ տարին , որ Աստուծոյ
ներկայացունեն , ու զոյգ մը տատրակ
կամ երկու աղաւնիի ձագ պատարագ
մատուցանեն , ինչպէս որ Սովսէս օ-
րինօք խորայելացւոց պատուիրեր էր :
Ան ժամանակը՝ Արուսաղէմ ձերունի
մը կար Սիմէոն անունով , արդար ու
աստուածավախ մարդ մըն էր : Աստ-
ուած անոր իմացուցեր էր որ մինչեւ
Քրիստոս փրկիչը չի տեսնէ՝ ինքը չի
պիտի մեռնի : Աւ երբոր Յովսէփ ու
Վարիամ Յիսուս մանուկը տաճարը
տարին , Սիմէոն ալ հոն եկաւ , գիր-
կը առաւ անիկայ ու ըսաւ . “ Տէր ,

” ալ թող տաս ծառայիդ որ խաղաղու-
” թեամբ մեռնիմ, վասն զի, իմ աչ-
” քերս տեսան ան Փրկիչը՝ որ դուն
” մեզի տուիր ” :

Ան ատենը տաճարին մէջ Աննա աւ-
նունով այրի կին մը կար, 84 տարե-
կան, որ մարգարէ ալ էր. ասիկայ իր
կեանքը աղօթքով կ'անցունէր. Սիմե-
ոնն ծերունիին հետ մէկ եղաւ, ու Աս-
տուծոյ գոհութիւն տուաւ :

Ետքը Վարիամ ու Յովսէփ իրենց
Նաղարէթ քաղաքը դարձան :

Եամանակէ մը ետքը՝ Աստուծոյ
հրեշտակը երեւցաւ Յովսէփին քու-
նին մէջ, ու ըսաւ անոր. “ Այլիւ, առ
” ատ տղան ու անոր մայրը՝ ու Ազխա-
” տոս վախիր, ու հոն բնակէ, մինչեւ
” որ ես քեզի ըսեմ որ նորէն ետ դառ-
” նաս. վասն զի Հերովդէս ատ տղան
” սիրտի փնտրուէ սպաննելու համար ” :
Յովսէփ ելաւ ու գիշերով Ազխատոս
դնաց, տղան ու անոր մայրն ալ մէկ
տեղ առնելով :

Արդարեւ, Հերովդէս մոգերուն

դառնալուն կ'սպասէր, որ դիտէր ա-
նոնց Վեթղեհէմ երթալը. ու երբոր
տեսաւ որ անոնք ետ շի դարձան, խիստ
բարկացաւ, ու ան ժամանակը սու-
կալի խորհուրդ մը բրաւ մտքին մէջ.
խորհեցաւ, որ Վեթղեհէմի ու անոր
մօտերը գանուած տեղուանքը որչափ
երկու տարվընէ վար տղաք կան նէ՝
բոլորն ալ սպաննել տայ. ասանկով կը
յուսար թէ նաեւ հրէից թագաւորն
ալ կ'սպաննէ, որուն ճնունդը՝ իրեն
այնչափ երկիւղ սրտաճառեր էր: Աս
վճիռը շատ անգուծ վճիռ մըն էր, ու
բովայնքան խեղճ մանր տղաքներ կեան-
քերնին կորսընցուցին ու այնչափ թըշ-
ուառ մայրեր ալ յուսահատութեան
մէջ ինկան: Այրեմիա մարդարէն շատ
ժամանակ առաջ գուշակեր էր. Հե-
րովդէս թագաւորին աս ընելիք չա-
րագործութիւնը, ու անոր մարդարէ-
ութիւնը կատարուեցաւ:

Քանի որ Հերովդէս ողջ էր, Յով-
սէփն ու Մարիամը Ադիպտոս կեցան.
Երբոր ան մեռաւ, նորէն հրեշտակ մը

երեւեցաւ Յովսէփին՝ քնացած ժամաւ նազը ու անոր ըսաւ, որ ալ խորայէլացւոց երկիրը կրնար երթալ, վասն զի տղան մեռցրնելու համար փնտրուողները մեռան : Յովսէփի հնազանդեցաւ Աստուծոյ աս նոր հրամանին, ու այն սուրբ տղեկովը ու անոր մօրը հետ մէկ տեղ Վալիլեայի Ազարէթ քաղաքը դարձաւ :

Գ Լ Ո Ւ Խ Դ .

Յիսուսի աստուծոյ յարգանքով զարգացելու հետ խօսակցիւն :

ՅԻՍՈՒՍ մանուկը կը մեծնար ու կը զարգանար, ու լի էր իմաստութեամբ ու Աստուծոյ շնորհքը անոր վրայ էր : Յովսէփ ու Մարիամ ամէն Օրտոկի տօնին Արուսաղէմ կ'երթային ու Յիսուսը հետերնին կը տանէին : Արբոր Յիսուս 12 տարու եղաւ, առին Արուսաղէմ տարին ինչպէս որ իրենց սու վորութիւնն էր : Աւ երբոր տօնին օրերը անցաւ, ետ դարձան, բայց Յիսուս Արուսաղէմ մնաց, ու Յովսէփին

ու Վարխամբ չի գիտէին . կարծեցին որ ուրիշ ճամբորդներու հետ է . ու լման օր մը քալելէն ետեւ , իրենց ազգականներուն ու բարեկամներուն հարցուցին , և երբ որ չի գտան , մեծ հոգի մէջ ինկան , նորէն Արուսաղէմ դարձան փնտրուելու : Արջասէս երեք օր փնտրուելէն ետեւ , անիկայ տաճարին մէջ գտան . տեսան որ օրինաց վարդապետներուն հետ նստեր զանոնք մտիկ կ'ընէր ու անոնց բան կը հարցունէր , ու բոլոր լսողները կը զարմանային անոր իմաստութեանը ու սրատասխաններուն վրայ : Վարխամն ու Յովսէփ խիստ զարմացան երբ որ տեսան իրենց տղան վարդապետներուն մէջ : Վայրը ըսաւ անոր , « Օւաւնկա , »
 « ի՞նչ ըրիր , ահա երեք օր է որ քու հայրդ ու ես բոլոր քաղաքին մէջ քեզ կը փնտրուենք ու մեծ անհանգստութեան մէջ էինք » : Յիսուս ալ անոր սրատասխան տուաւ , « Օ, իսին »
 « չո՞ւ կը փնտրուէիր , չկատէիր որ ինձի »
 « իմ հօրս տունը ըլլալ պէտք է » : Ա-

սով հասկըցընել կ'ուղէր որ ինքը որդի Աստուծոյ ըլլալով՝ իր մանկութեանէն պէտք էր իր խօսքերովն ու գործքերովը՝ փառաւորել իր երկնաւոր հայրը : Աւերջապէս Յիսուս գնաց անոնց հետ, ու անոնց հնազանդ էր, ու կը զարգանար իմաստութիւն՝ հասակով ու շնորհքով՝ Աստուծոյ և մարդկանց առջեւը :

ԳԼՈՒԽ Ե .

Քրիստոսի Պրոֆետիան :

ՅՈՒՀԱՆՆԵՍ՝ Եղևաբեթի ու Օւրբարիայի որդին, Աստուծոյ կամօքը որոշուած էր, որ մարգարէ ըլլայ ու Փրկչին գալուստը հրէից աւետարանէ : Այս տղան մեծցաւ ու ետքը գընաց անապատը բնակեցաւ, մինչեւ որ Աստուծոյ կամքը կատարուելու օրը եկաւ :

Այն ժամանակը Յովհաննէս եկաւ, Յորդանանու եզերքը, ու կը յորդորէր բոլոր մարդիկը որ մեղքերնուն ապաշխարեն ու ճամբանին փոխեն,

ու անոնց կը քարոզէր որ Փրկիչը քիչ
օրէն երեւան պիտի ելլէ :

Յովհաննէս ու զաի ստեւէ (աէվէ-
յի մաղէ) հազուստ կը հագնէր , ու
իրեն ուտելիքը վայրի մեղր ու մարախ
էր : Այրուսաղէմի ու Հրէաստանի բո-
լոր բնակիչները բաղմութեամբ իրեն
կուգային , ու ան ալ մեղքերնին խոս-
տովանողները Յորդանանու ջրերուն
մէջ կը մկրտէր : Ամանք կը կարծէին թէ
Յովհաննէս ինք էր Քրիստոսը . բայց
անիկայ կ'ըսէր անոնց . « Աս ձեզի կը
" մկրտեմ ջրով , բայց ինձմէ ետքը դա-
" յլիքը ինէ զօրաւոր է . ես անոր կօ-
" շիկներն անգամ հանելու արժանի
" չեմ . ան ձեզի հոգւով սրբով , ու հը-
" րով պիտի մկրտէ , և դատաստանի օ-
" րը մարդիկը պիտի դատէ ու մեղա-
" ւորները պատժէ » :

Այս ատենները Յիսուս երեսուն
տարուան եղեր էր . մինչև այն ատե-
նը Աաղարէթ կեցեր իր ամենասուրբ
մօրը ու Յովսէփին քով , որ հիւսնու-
թիւն կ'ընէր , ելաւ Վալիլեայէն ե-

կաւ որ ինք ալ Յովհաննէսէն մկրտու
 ուի : Թէպէտ Յիսուս կարօտու թիւն
 չունէր իր մեղքերը ասպաշխարելու ,
 վասն զի ամենեւին մեղք չունէր , ամ
 բիժ ու անարատ էր . բայց ուղեց որ
 օրինակ մը տայ մարդկանց իրենց ընե-
 լիքներուն վրայօք :

Յովհաննէս ճանչնալով անիկայ աչ-
 խարհի Փրկիչ ըլլալը , մկրտել չուզեց՝
 ըսելով . « Ինձի պէտք է քենէ մկրտու
 » ու իլ ու դուն ինձի կուգաս » : Բայց
 Յիսուս պատասխանեց անոր . « Թող
 » տուր որ ամէն արդարութիւնը կա
 » տարուի » : Ուստի մկրտուեցաւ Յով-
 հաննէսէն Յորդանան գետին մէջ . ու
 երբոր ջրէն ելաւ ու աղօթք կ'ընէր ,
 մէկէն ՚ի մէկ երկինքը բացուեցաւ Յի-
 սուսի վրայ , Յովհաննէս տեսաւ որ
 Աստուծոյ հոգին Աղաւնիի կերպով
 կ'իջնար ու անոր վրայ կը դադարէր .
 ու երկինքէն ալ ձայն մը լսուեցաւ որ
 կ'ըսէր . « Ատիկայ է իմ սիրելի որդիս ,
 » ասոր հաւնած եմ ես » : Անկեց ետ-
 քը՝ Յովհաննէս քանի որ Յիսուսը

տեսներ , կ'ըսէր . « Ասիկայ է Աստու-
ծոյ գառը՝ որ աշխարհի մեղքերը
կը բառնայ » :

Գ Լ Ո Ւ Խ Զ .

Յիսուս զիսի գլխիւն իւր իւր ինչ է :

Այն ժամանակը՝ Տէրն մեր Յիսուս
Քրիստոս սկըսաւ քաղաքներն ու գիւ-
ղերը պըտըտել ու ամէն տեղ Աստու-
ծոյ աւետարանը քարոզել , իրենց
խմայընելով թէ՛ մարգարէնեբէն
գուշակուած Անսիան կամ Քրիստո-
սը ինք էր , Աստուծոյ որդին՝ որ աշ-
խարհք վրկելու համար խրկուեցաւ ,
և թէ իրեն հաւատացեալները մե-
ղաց թողութիւն ու յաւիտենական
կեանք պիտի գանեն : Յիսուս շատ
հրաշքներ կ'ընէր որ մարդիկ տեսնե-
լով իրեն Աստուծմէ խրկուած ըլլա-
լուն հաւատան , ամէն տեսակ հիւ-
ւանդութիւնները կը բժշկէր մէկ վայր-
կենի մէջ ու մէկ խօսքով . կուրաց աչք
կուտար , համերց լեղու , ու խօսել-
բուն ականջները կը բանար , դիւա-

հարները կը բժշկէր ու մեռեալները
կը յարուցանէր : Այլ կողմէն ալ ամէն
տեսակ առաքինութեանց օրինակ ե-
ղեր էր . խոնարհասիրտ ու հեղաբա-
րոյ էր . իր հակառակորդներուն համ-
բերութեամբ կը տանէր . զղջալ ու-
ղող մեղաւորներուն վրայ կը գլծար .
իր բոլոր գործոցը մէջ , մի միայն իր
հօրը՝ Աստուծոյ փառքը կը փնտրուէր ,
ու գիշերները աղօթքով կ'անցունէր :
Յիսուսի բոլորաւքը միշտ աշակերանի
կային , այսինքն անանկ մարդիկ որ ի-
րեն վարդապետութիւնը մտիկ կ'ընէ-
ին ու կը ջանային որ իր խրատներէն
օգտին : Յիսուս անոնց մէջէն տասն
երկու հոգի զատեց , որ միշտ իրեն
հետ ըլլան , ու անոնք առաջալ ան-
ուանեց , որ խրատ ըսել է . վասն զի
անոնք ասդին անդին պիտի խրկէր ա-
ւետարան քարոզելու համար :

Օր մը՝ Յիսուսի աշակերտները
ուղեցին որ իրենց աղօթք ընել սոր-
վեցնէ . Յիսուս ալ անոնց աս աղօթ-
քը սորվեցուց , որ մենք ալ սղարտական

ե՛նք ամէ՛ն օր սրտանց ընելու : “ Հայր
 ո՛մեր որ յերկինս , սուրբ եղիցի անուն
 ո՛քո , եկեսցէ արքայութիւն քո : Ա՛յ
 ո՛ղիցին կամք քո որպէս յերկինս և
 ո՛յերկրի . զհայ մեր հանապազորդ
 ո՛տուր մեզ այսօր . և թող մեզ զպար
 ո՛տիս մեր , որպէս և մէք թողումք
 ո՛մերոց սարտապանաց . և մի՛ տանիր
 ո՛ղմեզ ՚ի փորձութիւն , այլ փրկեա
 ո՛ղմեզ ՚ի չարէ : Օ՛խ քո է արքայու
 ո՛թիւն և զօրութիւն և փառք յա
 ո՛ւլիտեանս ամէ՛ն ” :

Օր մըն ալ Յիսուսի մանր տղաք
 ներ բերին , որ իր ձեռքը վրան դնէ
 ու զանոնք օրհնէ . ու աշակերտները
 վախնալով որ չըլլայ թէ իրենց երկնա
 ւոր վարդապետը ձանձրանայ , տղաքը
 բերողները չեխելով մերժեցին . բայց
 Յիսուս ըրածնին տեսաւ ու նեղա
 ցաւ . ու ան տղաքը քովը կանչելով՝
 ըսաւ իր աշակերտներուն . “ թող տը
 ո՛ւէք որ ինձի դան առ փոքրիկ տղա
 ո՛քը ու մի՛ արգիլէք ” : Ատքը անոնք
 գրկեց , ձեռք դրաւ վրանին ու օրհն

նեց :

Սիրելի տղաքներ , դուք ալ պէտք է որ մօտենայք ձեր Փրկչին որ ձեզ օրհնէ : Դուք ամմէնդ ալ կրնայք այս երջանկու թեան հասնիլ . Յիսուս Քրիստոս իրեն դացողներուն մէկը՝ չի մերժեր . աղօթք ըրէք անոր հաւատքով . խնդրեցէք օր աւուր որ զինքը ձեզի աւելի ճանչցունէ ու սիրել տայ . միշտ մտմբտացէք թէ որչափ այն ձեզ կը սիրէ որ մինչեւ ձեզի Փրկիչ ըլլալու յանձն առաւ . ու միշտ յիշեցէք , որ մէկը՝ մինչեւ Յնի օրհնուիր չառնէ՝ ոչ աս կեանքին մէջ երջանիկ կրնայ ըլլալ և ոչ հանդերձեալ կենաց մէջ :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Յայրս ժողովրդայեպիս աշխիանը՝ յայրու
 ինն առնելը :

Ս' Ե Բ տէրը՝ Յիսուս Քրիստոս , անդադար հրաշագործութիւն կ'ընէր . ու ով որ իրմէ օգնութիւն կը խընդրէր , կը մխիթարուէր կամ կը բժրչկըմէր : Օր մը Յայրոս անունով ժողո-

վորդապետ մը եկաւ Յիսուսի, երբ
որ անիկայ գտաւ՝ ոտքը ինկաւ, ու
կ'աղաչէր որ իր տունը մտնէ. վասն
ղի, իր մէկ հատիկ տասն երկու
տարեկան աղջիկը մեռնելու վրայ էր:
«Տէր, ըսաւ անոր, աղջիկս մեռնե-
լու վրայ է, եկոր ձեռքդ անոր վրայ
» դիր որ ապրի »: Յիսուս ալ խսկոյն ե-
լաւ ու աշակերտներուն հետ մէկ տեղ
գնաց ու հետն ալ շատ մը ժողովուրդ
կար, որ բոլորը պատեր զինքը կը նե-
ղէին: Ան ժամանակը՝ տասն երկու
տարվնէ ՚ի վեր հիւանդ կին մըն ալ
որ բժիշկներուն օգնութեամբը չէր
կրցեր բժշկուիլ, Յիսուսի համար ըս-
ուածները ըսած ըլլալով՝ այն բաղ-
մութիւնը ճղեց, ու եկաւ անոր մօ-
տեցաւ ու հագուստին ծայրին դը-
պաւ. վասն զի ինքնիրենը կը խորհէր
որ միայն հագուստին անգամ դպչե-
լու ըլլայ կը բժշկուի: Այն վայրկե-
նին մէջ զգաց որ իր վրայէն այն հիւ-
ւանդութիւնը գնաց: Յիսուս ալ ե-
տին դարձաւ ու ըսաւ. «Ա՛յլ դպաւ

« Ինձի » : ու իր բողոքաբանները կը նայէր
 որ դպչողը տեսնէ : Ան ժամանակը կը
 նը դողալով Յիսուսի ոտքը ինկաւ ու
 ըսաւ անոր՝ ինչ սրտածառի համար
 դպչիլը և թէ ինչպէս շուտ մը բը-
 ժըշկուեր էր : Յիսուս ալ ըսաւ անոր
 « Աղջիկս, բու հաւատքդ քեզ փրկեց,
 « Երթաս բարով » : Աւերբոր Յիսուս
 դեռ կը խօսէր, Յայրոսին տունէն մե-
 կը եկաւ ու իրեն ըսաւ, « Աղջիկդ մե-
 « ուաւ, ալ վարդապետը մի աշխատ
 « ցընէր ասկէ անդին տանելով » : Եւ
 երբոր աս խօսքերը լսեց, « Մի վախ-
 « նար, ըսաւ, միայն հաւատա, աղ-
 « ջիկդ կ'ողջնայ » : ու իր աշակերտ-
 ներէն միայն երեք հոգի հետ առաւ
 ու գնաց : Այրբոր տուն հասաւ, նա-
 յեցաւ որ խել մը մարդիկ եկեր կու-
 լային ու կը ճէնին : Յիսուս ըսաւ ա-
 նոնց, « Ինչո՞ւ կուլաք, ինչո՞ւ կը պօ-
 « ուաք : Մէկդի գացէք ատ աղջիկը
 « մեռած չէ, քնացած է » : Աս խօս-
 քերը լսողները սկըսան վրան խնդալ,
 վասն զի գիտէին որ ան մեռեր էր :

Յիսուս ամէնն ալ դուրս հանելէն ետեւ , մեռելին եղած սենեակը մտաւ հետը միայն իր երեք աշակերտներն ու մեռելային ծնողքը առնելով : Կնաց աղջկանը ձեռքէն բռնեց ու անոր լռսաւ . “ Աղջիկս ելիր , հրաման կ'ընենեմ քեզի ” : Իսկոյն աղջիկը ելաւ ու սկըսաւ քալել : Օնտղքը ամիշեցան մնացին , բայց ուրախութեամբ ալ լեցուեցան : Աւ այս հրաշքին համբաւը ամէն տեղ տարածեցաւ :

Գ Լ Ո Ի Խ Ը .

Քրիստոսի կէնք հարու՛ր երի՛ր յո՛ւր՛ւ
 կէնք հարու՛ր հոգի՛ կշարժե՛լը :

Ի Ի Ա Ն Դ Ն Ե Բ Ո Ի Ն վրայ Յիսուսի ըրած հրաշագործութիւնները ժողովուրդը տեսնելով շատ մարդիկ ետեւէն կ'երթային : Յիսուս ալ աշակերտներովը անատաա լեռ մը ելաւ : Հոն երբոր իրիկունն եղաւ , աշակերտները եկան իրեն ըսին թէ հրաման տայ ժողովուրդին որ երթան կերակուր ուտեն : Յիսուս ալ ըսաւ . “ Ա

« անոնց երթալ պէտք չէ, դուք տուէք
« անոնց ուտելիք » : Պատասխան տը-
ւաւ Անդրէաս, « Հոս պատանի մը
« կայ որ դարիէ հինգ հաց ու երկու
« հատ ալ ձուկ ունի, բայց այսչափ
« մարդուն անիկայ քնչալէս կը բաւէ » :
Փիլիպպոս ալ ըսաւ որ, « Անոնց եր-
« կու հարիւր դահեկանի հաց պէտք
« է » : Յիսուս հրամայեց որ ժո-
ղովուրդը ասդին անդին խոտերուն
վրայ նստեցունեն, ու երկինքը նայե-
լով՝ այն հինգ նկանակը ու երկու
ձուկերը օրհնեց ու ժողովուրդին մէջ
բաժնեց : Ասով կնիկներէն ու մանր
տղոցմէն ՚ի զատ հինգ հաղարի չափ
մարդիկ կշտացան : Ատքը կտորվանք-
ներն ու փշրանքներն ալ ժողվել տը-
ւաւ, որով տասն երկու սակառի
լեցուն եղաւ, ու խել մըն ալ ձուկ :
Արքոր ժողովուրդը այս հրաշքը տե-
սաւ, ու զեց որ Յիսուսը թագաւոր
ընեն : Յիսուս ալ գիտնալով որ գան
զինքը պիտի յափշտակեն թագաւոր
գնելու համար, անոնցմէ փախաւ ու

մինակ լեռը քաշուեցաւ : Եողովուրդը
անիկայ փնտրուելու ելաւ , ու երբ որ
գտան անիկայ ծովուն անդիի կողմը՝
հարցուցին անոր . « Վարդապետ երբ
ոեկար հոս » : Յիսուս ալ պատաս-
խան տուաւ ու ըսաւ . « Հրաշագոր-
ոծութեանս համար իս չէք փնտրե-
ո՞ւք , այլ հացը ուտելնուդ ու կըշ-
ոտանալնուդ համար : Գացէք աշխա-
ոտեցէք չէ թէ կորստական կերակու-
ոքին համար , այլ անոր՝ որ յաւիտեա-
ոնքս կը մնայ , ու անիկայ ալ որդին
ոմարդոյ պիտի տայ ձեզի » : Հարցուց
Ժողովուրդը անոր . « Ի՞նչ ընենք , որ
Լստուծոյ գործքերը գործած ըլլանք » :
Պատասխան տուաւ Յիսուս . « Լս-
ոտուծոյ գործը այն է , որ զիս խրկու-
ողին հաւատաք » : Ի՞նչ անոր . « Ի՞նչ
ոնչան պիտի ցրցընես որ տեսնենք ու
ոհաւատանք » : Սեր հայրերը անասա-
ոտին մէջ մանանան կերան . ինչն որ
ոգրած է թէ , Էրկինքէն հաց գոտաւ
ոնոնց ոտելը » : Պատասխան տուաւ
Յիսուս . « Սոլսէս ձեզի երկինքէն

Դ հաց չի տուաւ , հապա ճշմարիտ հա-
 Դ ցը՝ երկինքէն իմ հայրս կուտայ , վն
 Դ զի Մատուծոյ հացը անիկայ է , որ
 Դ երկինքէն կ'իջնայ ու աշխարհի կեանք
 Դ կուտայ Դ : Մինն անոր « Տէր , այն
 Դ հացը միշտ մեզի տուր Դ : Պա-
 տասխան տուաւ Յիսուս . « Ահնաց
 Դ հացը ես եմ , ով որ ինձի դայ , չի
 Դ պիտի անօթե՛նայ , ու ով որ ինձի
 Դ հաւատայ՝ երբէք չի պիտի ծարա-
 Դ լի Դ : Հրէայները տրտուե՛ց կ'ընէին
 Յիսուսի համար թէ ինչո՞ւ համար
 երկինքէն իջած հացը ես եմ ըսաւ :
 Յիսուս ալ պատասխան տուաւ ա-
 նոնց « Ահնաց հացը ես եմ . ձեր
 Դ հայրերը անապատին մէջ մանանան
 Դ կերան ու մեռան . բայց երկինքէն
 Դ իջած հացը այն է , որ ուտողը չի
 Դ մեռնիր , ես երկինքէն իջած այն կեն-
 Դ դանի հացն եմ . աս հացէն ուտողը
 Դ յաւիտեան պիտի ապրի . ու իմ տա-
 Դ լիք հացս՝ իմ մարմինս է , որ աշխար-
 Դ հի կենացը համար պիտի տամ Դ :
 Հրէայները կը վեճէին իրարու հետ

ու կ'ըսէին : « Այս ինչպէս իր մար-
 ոմինը մեզի ուտելու պիտի տայ » :
 Յիսուս ալ ըսաւ անոնց՝ « Իրաւ կ'ը-
 դսեմ ձեզի . մինչեւ որ որդւոյ մար-
 ոդոյ մարմինը չուտէք , ու անոր ա-
 որիւնը չի խմէք , դուք ձեր վրայ
 ո կեանք չի պիտի կրնաք ունենալ : Այլ
 ո որ իմ մարմինս կ'ուտէ , ու արիւնս
 ո կը խմէ՝ յաւիտենական կեանք կ'ու-
 ոնենայ , ու ես ալ յարութիւն պիտի
 ո տամ անոր վերջին օրը . վասն զի իմ
 ո մարմինս ճշմարիտ կերակուր է , ու
 ո իմ արիւնս ճշմարիտ ըմպելի է : Այլ
 ո որ իմ մարմինս կ'ուտէ ու իմ արիւ-
 ոնըս կը խմէ , ինձի հետ է , ու ես ալ
 ո անոր հետ եմ :

Ասանկ երկար կերպով սուրբ հա-
 զորդութեան վրայ Քրիստոս վարդա-
 պետութիւն ընելով հասկրցուց , որ
 առանց անոր քրիստոնեայ մը չի կրը-
 նար փրկութիւն գտնալ , ու յաւիտե-
 նական կեանք ժառանգել :

Գ Լ Ո Ւ Խ Թ .

Յիսուսի Թագոյ Էւը այլախօսուիլը :

Ք Ր Ի Ս Տ Ո Ս իւր քարոզութեանը եր-
րորդ տարին , օր մը առաքեալներուն
հարցուց , թէ մարդիկ ինձի համար
ո՞վ է կ'ըսեն : Պատասխան տուին թէ ,
ոմանք Ազիա է կ'ըսեն , ոմանք Արե-
միա , կամ ուրիշ մարգարէ մըն է կ'ը-
սեն : Աորէն հարցուց . դուք ո՞վ է կ'ը-
սէք ինձի համար : Պետրոս առաքեա-
լը պատասխան տուաւ ամէնուն բեր-
նէն . « Դուն կենդանի Աստուծոյ որ-
դին Քրիստոսն էս » : Այն ատենը
Քրիստոս երանութիւն տուաւ Պե-
տրոսի . և իմացուց ալ առաքելոց օր
այն դաւանութեանը վրայ որ Պե-
տրոս առաքեալը դաւանեցաւ , իրեն
Ակեղեցին պիտի շինէ . այսինքն այն
դաւանութիւնը տուողը՝ իր ժողո-
վուրդը պիտի ընէ . որ այն ժողովուր-
դը և Ակեղեցին դժոխքին դռներէն
ալ չի պիտի յաղթուի : Անկէց ետքը
քանի մը պիտանի խրատներ ալ տը-

Լաւ առաքելոց :

Ասկէց շարաթ մը անցնելէն ետ-
քը՝ Պետրոս Յակոբոս ու Յովհան-
նէս առաքելալները հետն առած Թա-
փօր լեռը ելաւ : Հոն Յիսուսի կեր-
պարանքը բոլորովին փոխակեցաւ , ե-
րեսը արեւու պէս , ու հազուստը ձիւ-
նի պէս ճերմակ փայլուն եղաւ : Մտի-
սէսն ու Աղիան ալ երևեցան , ու Յի-
սուսի հետ խօսեցան իր շարշարանա-
ցըն ու մահուանը վրայ . իսկ առա-
քելալները զարմացած կը նայէին : Ար-
բոր Մովսէս ու Աղիա գացին , Պետ-
րոս սկըսաւ Յիսուսի աղաչել որ հոն
մնան : Ան ատենը լուսաւոր ամպ մը
ծածկեց զիրենք , ու մէջէն ասանկ
ձայն մը եկաւ « Աս է իմ սիրական որ-
դիս , ասոր մտիկ ըրէք » : Առաքելա-
լները վախցան ու գետինը ինկան : Յի-
սուս զիրենք ոտք հանեց , ու ասպալը
րեց որ տեսածնին ուրիշի չի պատ-
մեն , մինչեւ որ որդի մարդոյ յարու-
թիւն առնէ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ :

Յիսուսի՝ Ղազարոսին յարողի-նն ԿԱԼԸ :

ԵՐԲՈՐ Ղազարոս ծանր հիւանդա-
ցաւ , անոր երկու քոյրերը Մարիամ
ու Մարթա Յիսուսի մարդ խրկեցին
խմացուցին : Յիսուս երկու օր ալ
ուշացաւ , ու ետքը աչակերտներուն
ըսաւ . « Եթեանք Հրէաստան , որ
» Ղազարոսը արթնցընեմ » : Աչա-
կերտները չի հասկըցան Յիսուսի այս
խօսքը ու սկըսան զարմանալ : Յիսուս
ալ ան ատենը յայտնի ըսաւ թէ , Ղա-
զարոս մեռաւ , բայց ես ուրախ եմ ,
վասն զի ասով ձեր հաւատքն ալ պի-
տի հաստատուի : Ետքը երբոր Բե-
թանիա հասաւ , Ղազարոս չորս օր-
վան մեռած ու թաղուած էր : Մար-
թա երբոր լսեց Քրիստոսի գալը՝ դէ-
մը վազեց ու ըսաւ . « Տէր , թէ որ
» հոս ըլլայիր , եղբայրս չէր մեռներ ,
» բայց հիմայ ալ կը հաւատամ որ ե-
» թէ ուզես կրնաս անիկայ ողջընցը-
» նել » : Յիսուս ալ պատասխան տը-

ւաւ . « Կ'ողջըննայ թէ որ հաւա-
նասա » : Մարթա գնաց իր Մարիամ
քոյրն ալ կանչեց , ու անոնց հետ բա-
րեկամներ ալ եկան լալով ու սգալով :
Օ անոնք տեսնելով Յիսուսի ալ սիր-
տը ելաւ . հարցուց Ղազարոսի թաղ-
ուած տեղը , և երբոր ցրցուցին , վրա-
յէն քարը վերցընել տուաւ ու ա-
մուր ձայնով կանչեց : « Ղազարոս
դուրս եկոր » : Իսկոյն մեռելը պա-
տանքներովը ելաւ կայնեցաւ . Յի-
սուս ալ հրամայեց որ պատանքը քա-
կէն ու թող տան որ քալէ : Ասով
չատ մարդ Յիսուսի հաւատացին :
Ոմանք ալ գացին փարիսեցիներուն ի-
մացուցին : Անոնք ալ քահանայապետ-
ներուն հետ խորհուրդ ըրին որ Յի-
սուսը մեռցընեն , որպէս զի ասանկ
հրաշագործութիւններով ժողովուր-
դը իրեն չի դարձընէ :

Գ Լ ՈՒ Խ Ժ Ա .

Յիսուսի Լըրուսաղէմ հանելը :

Յ Ի Ս ՈՒ Ս իր աշակերտներովը Լըրուսաղէմ գնաց : Ղամբան իր տասն երկու առաքեալները մէկ կողմ առնելով ըսաւ անոնց : « Մենք հիմայ Լըրուսաղէմ կ'երթանք կոր , մարգարէներուն խօսքերը կատարուելու յժամանակը ահա հասած է : Սպանն զի , որդին մարգոյ մեղաւորներուն յպիտի մատնուի , անիկայ պիտի ծաղրեն , խարազանով պիտի ծեծեն , երեսը պիտի թքեն , ու անիկայ ծեծելէն ետեւ պիտի սպաննեն . բայց երեք օրէն յարութիւն պիտի առնէ » :

Միւս օրը երբոր Յիսուս ու իր աշակերտները Լըրուսաղէմ մօտեցան , իր աշակերտներէն երկու հոգի կանչեց ու ըսաւ անոնց . « Գացէք , սա զիմացնիս կղած գիւղը . հոն էջ մը պիտի գտնէք կապած , իր աւանաւ կրն ալքովը , քակեցէք ու ինծի բե-

որ էք : թէ որ մէկը ձեզի հարցունէ
որ թէ ինչո՞ւ կը տանիք , ըսէք , թէ իր
որ տիրոջը պէտք է : Աւստի աշակերտ-
ները գացին , ու Յիսուսի ըսածին պէս
ըրին . գտան էջը ու Յիսուսի բերին :
Կտքը՝ իրենց լաթերը անոր վրայ փը-
ռեցին ու Յիսուսը վրան հեծցուցին :
Բոլոր աս բաները անոր համար եղաւ ,
վասն զի , մարգարէ մը գուշակած էր ,
որ Անսիան Կրուսաղէմ պիտի մտնէ
իշու մը վրայ հեծած ու աւանակն ալ
ետելէն ունենալով :

Այն օրերը՝ Օլակիին տօնն ալ մօ-
տեցեր էր . տօնին համար Կրուսա-
ղէմ եկողներէն շատ մարդիկ՝ երբոր
լսեցին Յիսուսի Կրուսաղէմ մտնալը՝
արմաւենիի (խուռմայի ծառի) ոս-
տեր առին ու Յիսուսի դէմը գացին :
Ամանք լաթերնին ճամբուն վրայ փը-
ռեցին , ոմանք ալ ծառերու սստեր
կը բրցունէին ու ճամբուն վրայ կը
ձգէին : Աւ երբոր ձիթենեաց լեռնէն
վար կ'իջնային կտր , բոլոր ժողովուր-
դը ու աշակերտները ու ըախու թեամբ

լէցուած սկրսան բարձր ձայնով օրհնել զաստուած, ու Յիսուսի ետեէն ու առջևէն գացողները կը պօռային. « Ավսաննա, օրհնութի որդւոյ Վաւոթի, օրհնեալ որ գայ յանուն անո՞ր »

Երբոր Երուսաղէմ մօտեցան, Յիսուս նայեցաւ քաղաքին վրայ ու լացաւ. վասն զի, գիտէր որ քիչ ատենէն Երուսաղէմ պիտի կործանէր հըրէից թշնամիներէն, անոր մէջ գործովելիք թեղքին պատիժ ըլլալու համար : Ետքը Երուսաղէմ մտաւ ու բոլոր քաղաքը իրար անցաւ : Ամէն մարդ կը հարցունէր թէ ո՞վ է սա. ժողովուրդըն ալ կը պատասխանէր. « Յն մարդ գարէն Վալիլէայի՝ Նաղարէթ քաղաքէն » :

Յիսուս Աստուծոյ տաճարը մըտաւ, կոյրերը կաղերը կուգային անոր ու կը բժշկուէին : Քահանայապետները երբոր լսեցին որ տղաք տաճարին մէջ « Ավսաննա որդւոյ Վաւոթի » կը պօռային, բարկացան, ու ըսին Յիսուսի. « Ար լսե՞ս ինչ կ'ըսեն

Կ տղաք Կ : Պատասխանն տուաւ Յիսուս . « Լ'յո՛ւ , բայց դուք ալ չե՛ր
 Կ տէ՛ք որ մարդարէ՛նեքը ըսած են թէ
 Կ Լ'ստուած կատարեալ օրհնութիւնը
 Կ մանր տղայոց բերնէ՛ն պիտի առնէ Կ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

Ը Ն Դ Ի Կ :

Յ Ի Ս Ո Ւ Ս մկրտուելէ՛ն ետքը՝ իրեք
 տարի տեղէ տեղ պըտըտեցաւ բարե-
 ըարութիւնն ընելով ու աւետարանը
 քարոզելով : Արո՛նք որ իրեն Մեծիայ
 ու Փրկիչ ըլլալը ճանչցան , իրեն աշա-
 կերտ եղան . բայց որոնք որ չարու-
 թեամբ չէին ուղեր դառնալ , զինքը
 կ'ատէին ու անոր թշնամիներն էին ,
 միտք ըրին որ անիկայ բռնէն ու ըս-
 պաննեն : Լ'ն ատենը սատանան ալ
 Յուդայ իսկարիովտացիին փորը մը-
 տաւ որ տան երկու աշակերտաց մէ-
 կըն էր . դնաց քահանայապետներուն
 առաջարկեց որ Յիսուսը անոնց մատ-
 նէ : « Ի՞նչ կուտաք ինձի ըսաւ , որ
 Կ ես անիկայ ձեզի մատնեմ Կ : Բա-

հանայապետները երբոր աս խօսքը լըսեցին՝ շատ ուրախացան, ու անոր այս խոստմունքը կատարել տալու համար երեսուն արծաթի տուին. անկէց ետքը Յուդայ պատեհութիւն մը կը փնտրուէր որ Յիսուսը մասնէ : Այն օրերն ալ Օլատիկի տօնը կը կատարէին կոր : Այս տօնը Ագիպտոս սահմանուեր էր իսրայէլացւոց գերութեան ժամանակը : Արբոր իսրայէլացւոց ազատութեանը համար Աստուծոյ որոշած ժամանակը եկաւ հասաւ, Աստուած հրաման ըրաւ, որ ամէն մէկ տուն մէյմէկ խորոված դառըն ուտեն ու անոր արիւնովը ամէն տան դռանը վրայ նշան ընեն : Անկէ ետքը Աստուծոյ հրեշտակը եկաւ, ու եգիպտացւոց բոլոր անդրանիկները կոտորուեց. բայց իսրայէլացւոցը խնայեց : Ահա Օլատիկը՝ եգիպտացւոց այս պատեհասին ու իսրայէլացւոց Ագիպտոսէն ելլելուն յիշատակ ըլլալու համար էր որ Աճ ուղեց որ հրէայք ամէն տարի տօնեն, իրենց նախա-

հարցը պէս խորոված գառն ու բա-
ղարջ ուտելով : Այս գառը՝ Յիսուս
Քրիստոս «Աստուծոյ գառը» կը նը-
շանակէ, որուն արիւնը պիտի թափ-
ուեր մեր մեղացը քաւութեանը հա-
մար, որով մեզ մեր դատապարտու-
թենէն ազատէ, ու մեզի համար թու-
ղութիւն ու յաւիտենական կեանք
առնէ :

Օգտակին առջի իրիկունը՝ Յիսուս
իր աշակերտներուն պատուիրեց որ
այն կերակուրին համար ինչ պէտք է
նէ պատրաստեն, ու իրիկուն ըլլալուն
պէս, անոնց հետ սեղան նստաւ : Ան
ժամանակը ըսաւ անոնց, «Յանկացի
» որ այս Օգտակը ձեզի հետ ուտեմ
» դեռ չի չարչարուած, վասն զի ու-
»րիշ անգամ մըն ալ չի պիտի ուտեմ,
» մինչեւ որ անիկայ կատարվի Աստու-
»ծոյ արքայութեան մէջ » : Այսքը ե-
լաւ, հանվեցաւ ու ղենջակ (փէշտի-
մալ) մը փաթորվեցաւ, ու կոնքի մը
մէջ ջուր լեցուց, ու սկըսաւ իր ա-
շակերտացը ոտքը լուալու իր փաթ-

արված զենջակովը սրբել : Ատքը Յիսուս սեղանի նստաւ ու ըսաւ իր աշակերտներուն . « Գիտէք ես ձեզի ո'րնչ ըրի : Գուք ինձի տէր ու վարդապետ կը կանչէք , ու աղէկ կ'ընէք , վասն զի , տէր ու վարդապետ ո'րք . ուստի թէ որ ես լուացի ձեր ոտքը , ես որ ձեր տէրն ու վարդապետն եմ , դուք ալ պէտք է որ մէկը զմէկու ոտք լուանաք . վասն զի , ես ձեզի օրինակ եղայ , որ ինչպէս ես ձեզի ըրի , դուք ալ ուրիշներուն ընէք » :

Յիսուս այս խոնարհութեան օրինակը իր աշակերտներուն տալէն ետքը՝ տրամութեամբ մը ըսաւ անոնց . « Չեզնէ մէկը զիս պիտի մատնէ » : Ասոր վրայ աշակերտները սկըսան մէկ մէկու նայել . չիտէին թէ որո՞ւ համար ըսաւ . ու մէկիկ մէկիկ սկըսան հարցունել . « Տէր , ես եմ արդեօք » : Ան ալ սլատասխան տուաւ . « Ա՛յ որ ո'րինձի հետ իր ձեռքը սկաւառակին երկնցուց՝ ան պիտի մատնէ զիս » :

« Արդւոյ մարդոյ համար այսպէս պի-
տի ըլլայ ինչպէս որ առաջուց զուր-
ոյցուած է . բայց վայ ան մարդուն ,
որուն ձեռքովը պիտի մատնուի :
« Հատ աղէկ էր ան մարդուն որ բը-
նաւ ճնած չըլլար » : Յուդան սկը-
սաւ խօսիլ ու ըսաւ . « Արդապետ ,
« ես եմ արդեօք » : Յիսուս ալ ըսաւ .
« Ի՞նչն ըսիր » : Յուդան մէկէն դուրս
ելաւ որ իր չարութիւնը կատարէ :
Կերակուրին վերջը Յիսուս հացը ա-
ռաւ , գոհացաւ , օրհնեց , կտրրուեց
ու իր աշակերտներուն բաժնեց ըսե-
լով . « Առէք կերայք , այս է մարմին
« իմ , որ վասն բազմաց տուեալ . զայս
« արասջիք առ իմոյ յիշատակի » : Ատ-
քը գինի առաւ բաժակով , օրհնեց ու
տուաւ անոնց ըսելով . « Արբէք ՚ի սը-
« մանէ ամենեքին , այս է արիւն իմ
« նորոյ ուխտի , որ վնձեր հեղանի » :

Ահա այս փրկարար խորհուրդը Քր-
րիստոս ան ժամանակէն հաստատեց ,
ու սուրբ առաքելոց ձեռքովը իր ե-
կեղեցւոյն աւանդեց . « Օ, այս արա-

որէք առ խմոյ յիշատակի որ ըսելով .
ուստի քանի որ սբ պատարագ տես-
նանք , պէտք է որ միտքերնիս բերենք
Քրիստոսի չարչարանքը ու խաչելու-
թիւնը , որ մեզի համար զինքը հօր Աս-
տուծոյ պատարագ ընծայեց սուրբ
խաչին վրայ . ու միշտ մեր փրկուէր
համար իւր սուրբ մարմինը մեզի ու-
տելու կուտայ , ու սուրբ արիւնը խը-
մելու . վասն զի կը հաւատանք ու կը
խոստովանինք , որ պատարագին մէջի
մեր տեսած սուրբ հացը , Քրիստոսի
ճշմարիտ մարմինն է , ու բաժակը ,
Քրիստոսի իսկական արիւնն է . ու
ճշմարիտ հաւատքով երբոր զղջանք
խոստովանինք ու ապաշխարենք մեր
մեղացը վրայ , ու անանկով Քրիստոսի
սուրբ մարմինը ու արիւնը առնենք
նէ , հարկաւ փրկութիւն կը գտնանք ,
ու յաւիտենական կեանքը կը ժառան-
գենք . աս էր Քրիստոսի ըսածը . « Եւ-
թէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մար-
ոգոյ և արբջիք զարիւն նորա , ոչ
որունիք կեանս յանձինս » : (Յօհ . զ . 54 :

Եւրոպայի երբոր գոհուած թիւննին ըրին
լըմնցուցին, Յիսուս ըսաւ անոնց .
« Արդեակներս, ձեզի նոր պատուի-
րանք մը կուտամ, մէկզմէկ սիրե-
ցէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի :
« Աիրտերնիդ թող չի խռովի, հասցա
« Աստուծոյ հաւատացէք ու ինծի հաւ-
« ւատացէք : Իմ հօրս տունը շատ օ-
« թեւաններ կան . . . ես ձեզի տեղ
« կը պատրաստեմ . . . որ ես ուր պի-
« տի ըլլամ նէ դուք ալ հոն ըլլաք . . .
« Թէ որ զիս կը սիրէք, իմ պատուի-
« րանքներս պահեցէք . . . » : Աս խօս-
քերը ընելէն ետեւ, Յիսուս իր ա-
շակերտները առաւ ձիթենեաց լեռը
ելաւ . ու մինչեւ Վեթսեմանի ըս-
ուած տեղը հասաւ, հոն պարտէզ մը
կար, ներս մտաւ : Ան ժամանակը ը-
սաւ իր աշակերտներուն . « Գուք հոս
« նստեցէք մինչեւ որ ես երթամ ա-
« ղօթք ընեմ ու գամ » : Աւ անոնցմէ
քանի մը քայլ հեռացաւ, ծնկան վրայ
եկաւ ու գետնի վրայ խոնարհելով՝
աղօթեց ու ըսաւ . « Հայր, այս բա-

Կ ժակը (դատէհ) դարձուր ինէ . սա
 Կ կայն և այնպէս , իմ կամքս թող չըլ
 Կ լայ , քուկդ ըլլայ Կ : Յիսուսի բա
 ժակ ըսածը՝ իր քաշէլիք չարչարանա
 ցը պատկերն էր . որոնցմէ իր մարդ
 կային բնութիւնը կը սոսկար կոր : Այն
 ժամանակը Յիսուս սկըսաւ տագնա
 պիլ , ու վրան արուն քրտինք մը ե
 կաւ , որ մինչեւ դետինը կը թրջէր :
 Աստուած հրեշտակ մը խրկեց իրեն որ
 զինքը զօրացընէ . . . : Յիսուս ետքը
 նորէն իր աշակերտներուն քովը դար
 ձաւ , ու երբոր տեսաւ որ անոնք կը
 քնանան , ըսաւ անոնց . « Ի՞նչ , չի
 Կ կըցա՞ք ժամ մը հետս արթուն կենալ :
 Կ Այլիք աղօթքի կայնեցէք որ փորձու
 Կ թեան մէջ չիյնաք Կ : Այտքը անոնք
 ձգեց , ու նորէն գնաց աղօթքի կայ
 նեցաւ ու ըսաւ . « Հայր իմ , քեզի
 Կ ամէն բան հնարաւոր է , դարձուր
 Կ ինէ այս բաժակը , բայց չէ թէ իմ
 Կ ուղած իս պէս՝ այլքու կամացդ պէս
 Կ թող ըլլայ Կ : Արդէն ելաւ իր աշա
 կերտներուն քով եկաւ , ու երբոր տե

սաւ որ նորէն քնացեր են , երրորդ
անգամ գնաց աղօթքի կայնեցաւ ու
նոյն աղօթքը ըրաւ : “ Հայր թէ որ
ող'ուզես այս բաժակը դարձուր ինձ
ող'մէ , բայց չէ թէ իմ կամքս , այլ
ող'քուկդ թող ըլլայ ” : Արջապէս Յիսուս
նայեցաւ որ չարչարանաց ժամը
հասեր է , աշակերտներուն քով գը-
նաց ու ըսաւ . . . “ Եւստի հասաւ ա-
ող'հա որդի մարդոյ պիտի մատնուի
ող'մեղաւորներուն ձեռքը , ելէք , իս
ող'մատնելու մարդը մօտ է ” :

Յիսուս երբոր դեռ կը խօսէր ,
Յուդան եկաւ . հեան ալ խել մը մար-
դիկ առած՝ ձեռվրնին ջահերով (վա-
սըն զի գիշեր էր) թուրերով ու բի-
րերով որ քահանայապետներն ու ժո-
ղովրդոց ծերերը խրկեր էին : Յու-
դան անոնց նշան մը ցրցուցեր ըսեր
էր թէ , “ Այս ով որ համբուրեմ նէ՝
ող'անիկայ բռնեցէք ” : Աւ Յիսուսի
մերձենալով “ Վարեւ վարդապետ ող-
մաւ ու անիկայ համբուրեց : Յիսուս ,
որ առաջուց գիտէր բոլոր գլխուն գա-

լիքները՝ եկողներուն գէմը գնաց ու
 «Ով կը փնտրուէք » ըսաւ . անոնք ալ
 ըսին . «Նազովրեցի Յիսուսը » : «Ես
 » եմ » ըսաւ Յիսուս : Ես խօսքին վը-
 րայ անոնք ետ ետ գացին ու գետինը
 զարնուեցան : Յիսուս մէյմ'ալ հար-
 ցուց «Ով կը փնտրուէք » , անոնք ալ
 ըսին . « Յիսուս Նազովրեցին » : Յի-
 սուս պատասխան տուաւ . « Չեզի
 » ըսի որ ես եմ . ուստի թէ որ զիս կը
 » փնտրուէք , թող տուէք որ հետս ե-
 » ղողները երթան » : Են ժամանակը
 զինուորները՝ զօրապետները ու քա-
 հանայապետներուն ուղասաւորները
 Յիսուսը բռնեցին ու կապեցին : Ու
 բոլոր աշակերտները՝ Յիսուսը ձգե-
 ցին ու փախան :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Յիսուս եւ Խաւը Բարձր Կը Գնի :

Յ Ի Ս Ո Ւ Ս Ը կայիափա քահանայապե-
 տին տարին . ուր բոլոր քահանայա-
 պետները ու ժողովրդոց ձերերը ժող-
 վրված էին : Հոն տեղը Յիսուսի հար-

ցուցին թէ « Դձն ես Վրիտտօսը »
 « Աստուծոյ որդին » . ան ալ պատաս-
 խան տուաւ թէ « Դուք կ'ըսէք կոր
 » առ խօսքը » : Բայց մէկը իրեն չե-
 հաւատաց . ու բոլոր ատեանը վըճ-
 ուեց թէ յանցաւոր ու մահապարտ է :
 Օ, ինքը բռնող զինուորները սկըսան
 նախատել ու ծեծել ու գիշերը մին-
 չեւ լոյս թշնամանօք լեցուցին զանի-
 կայ : Դուսնալուն պէս Յիսուսը կա-
 պած առին Պոնտացի Պիղատոսին
 տարին , որ Հրէաստանի դատաւորն
 էր : Այն ժամանակը Յիսուսը մատ-
 նող Յուդան , երբոր տեսաւ թէ Յի-
 սուս դատապարտուեցաւ , ըրածին
 վրայ զղջաց ու առած երեսուն ար-
 ծաթին առաւ քահանայապետներուն
 ու իշխաններուն տարաւ ու ըսաւ ա-
 նոնց . « Ես մեղանչեցի արդար արիւն
 » ձեզի մատնելովս , առէք ասոնք » :
 Անոնք ալ պատասխան տուին « Եզեի
 » ինչ , ան քու գիտնալու բանդ է » :
 Ան ալ արծաթը տաճարին մէջ նետեց
 ու գնաց ինքըզինքը կախեց : Քահա-

նայապետները արծաթը առին ու ըսին . « Սենք չենք կրնար ասիկայ գանձը գնել . վասն զի , արեան գին է » : Աւ խորհուրդ ընելով՝ այն ստակով բրուտ մարդու մը ագարակը (չիֆտ լիկը Թառլայովը) ծախու առին որ օտարականներու գերեզման ըլլայ . աւնոր համար այն տեղը « Կէրտմա » ըսուեցաւ որ « Արեան դաշտ » ըսելէ : Ասանկով Արեմիա մարգարէին խօսքը կատարուեցաւ որ կ'ըսէ . « Աւ երեւոյստէն արծաթին առին որ ծախուողին գինն էր , ու անով բրուտ մարդու մը ագարակը ծախու առին » :

Յիսուսը Պիղատոսին բերին , աւնոր դէմ եղած ամբաստանութիւնները մտիկ ըրաւ , բայց անիկայ յանցաւոր չի գատեց . ու երբոր իմացաւ որ Յիսուս Վալիլէացի էր , Հերովդէսին խրկեց որ Հրէաստանի ուրիշ մէկ գատաւորն էր : Հերովդէս երբ որ Յիսուսը տեսաւ , ուրախացաւ , վասն զի , անոր համբաւը լըսեր էր , ու կը յուսար որ անկէց հրաշքներ

տեսնէ, Հերովդէս շատ հարցմունք-
ներ ըրաւ Յիսուսի. բայց երբոր տե-
սաւ որ իրեն հարցմունքներուն պա-
տասխան չի տար, արհամարհեց Յի-
սուսը ու ծաղու համար ճերմակ լաթ
մը հագցունելով՝ նորէն Պիղատոսին
խրկեց: Բայց Պիղատոս, Յիսուսի
վրայ դատապարտութեան պատճառ
մը չի գտնալով, անիկայ ազատելու
շատ հնարքներ բանեցուց, բայց պա-
րագն ելաւ: Քահանայապետներն ու
ձերերը կը գրգռէին ժողովուրդը որ
Յիսուսի մեռնելը ուզէ ու ամէնը
մէկ բերան «Թող խաչուի» կը պօ-
ւային: Խաչիլը՝ ան ժամանակները պա-
տիժներուն ամէնէն անարգն էր. մի-
այն գերիները անով կը դատապարտէ-
ին և ան ալ խիստ ծանր յանցանքնե-
րու համար: Պիղատոս յուսալով՝ որ
եթէ Յիսուսը լաւ մը պատժելու ըլ-
լայ՝ Հրէայները գոհ կ'ընէ, ու անան-
կով Յիսուսի կեանքը կրնայ ազատել,
Յիսուսը բռնել տուաւ ու հրամայեց
որ խարազաններով ծեծեն: () ինուոր-

ները մերկացուցին Յիսուսը ու անոր
 կարմիր վերարկու մը հագցուցին, գը-
 լուխը փուշէ հիւսած պսակ մը դը-
 րին, ու ձեռքը եղէգ մը տալով՝ ծըն-
 կան վրայ կուգային առջին ու կ'ըսէ-
 ին. «Մըջ եղիր, Թագաւոր Հրէից» .
 Աւերեսը Թքնելով եղէգը ձեռքէն
 կ'առնէին ու գլխուն կ'իջնային, Յի-
 սուս ասանկ չարչարուելէն ետքը՝ Պի-
 ղատոս նորէն փորձեց Յիսուսը ազա-
 տելու, վասն զի, Պիղատոս աղէկ գի-
 տեր, որ քահանայապետները չիքա-
 շելնուն մեռցընել կ'ուզէին Յիսու-
 սը : Սովորութիւն մը կսոր, որ ամէն
 Օգոստի տօնին՝ մէյ մէկ բանտարգետալ
 կ'ազատէին ժողովուրդին ընտրուքը :
 Պիղատոս հրէայներուն առաջարկեց
 որ Յիսուսը արձակեն, բայց ժողո-
 վուրդը ուզեց որ Յեսու Քարաբբա
 սը ազատուի անոր տեղը՝ որ մարդաս-
 պանութեան համար բռնուեր էր :
 «Աւրեմն ի՞նչ ընեմ ըսաւ Պիղա-
 տոս, Յիսուսը՝ որ Քրիստոս կ'ըս-
 ր վի կոր» : Անոնք ալ պատասխան տը-

ւին « Խաչը հանէ » : Բայց ինչ չա-
 ռազործութիւն ըրած ունի » . կրթի-
 նեց Պիղատոս . անոնք ալ եւս առա-
 ւել սօռացին թէ « Խաչը հանէ » :
 Ըն ժամանակը Պիղատոս ալ թող տը-
 ւաւ Բարաբբասը՝ ու Յիսուսը ժո-
 ղովորոց ձեռքը տուաւ որ խաչուի :
 Օջրականները նորէն սկսան Վրիս-
 տոսը նախատել ու չարչարել . ու ետ-
 քը՝ առին էն վերջի չարչարանքը կը-
 րելու այսինքն Վոգոթա տարին որ շը-
 րէից լեզուով Գագաթի ըսել է , վասն
 զի մահապարտները հոն կը գլխատե-
 ին : Յիսուս հոն ելաւ խաչն ալ ինք
 իր ուսը առած :

Յիսուս , մեզի համար այսչափ
 չարչարանք ու նախատինք կրեց : Աւ-
 րեմն ո՞րչափ սոսկալու եմք մեզքէն ,
 որուն թողութիւն առնելու համար ,
 մեր տէրը այսչափ վիշտեր կրեց : Ար-
 չափ երախտիք և որչափ սէր սպարտա-
 կան եմք անոր մարդասիրութեանը :

Գ Լ ՈՒ Խ Ժ Դ .

ՅԻՍՈՒՍ ԻՍԿՐԻՆԸ :

ԵՐԲՈՐ Յիսուս Գողգոթա լեռը կ'ելլէր՝ խաչը ուսը առած, անթիւ ժողովուրդէ կ'երթային ետեւէն ու կը նիկներ ալ՝ որ կուլային ու կ'ողբային անոր վրայ : Յիսուս ետին դարձաւ ու ըսաւ ան կնիկներուն . « Դստերք ուրուսաղէմի, մի լայք 'ի վերայ իմ . ու այլ լացէք 'ի վերայ անձանց և 'ի վերայ որդւոց ձերոց » : Ետքը՝ անոնց իմացուց ալ, որ քիչ ժամանակէն Երուսաղէմ քաղաքը բոլորովին պիտի կործանէր . և աս գուշակութիւնը՝ երեսունը եօթը տարի ետքը կատարուեցաւ բոլորովին : Յիսուսի հետ երկու հատ ալ չարագործ կը տանէին կոր որ խաչէն : Երբոր Գողգոթա հասան, զինուորները լեղիով (էօտով) խառնուած գինի տուին . Յիսուս համը առաւ ու չուղեց խմել : Ան ժամանակը՝ Յիսուս խաչին վրայ բեւեռեցին ձեռվրներէն ու ոտվրներէն

խոշոր բեւեռներով : Այսչափ դառն չարչարանաց մէջ , մէկ յանդիմանութիւն մը՝ մէկ գանգատ մը չի լսուեցաւ բերնէն : Յիսուս զինքը խաչը հանողներուն համար աղօթք կ'ընէր , ու կ'ըսէր . « Հայր՝ ներէ ասոնց , վառարն զի ըրածնին չեն գիտեր » : Արյնատենը՝ երկու աւազակներն ալ անոր հետ խաչը հանեցին , մէկը աջ դին , ու մէկայլը ձախ դին : Պիղատոս՝ Յիսուսի խաչին գլուխը մէկ տախտակ մը դրնել տուաւ վրան ասանկ գրուած . « Ասիկայ է նաղովրեցի Յիսուսը՝ հրորէից թագաւորը » : Օրինուորները Յիսուսը խաչը հանելէն ետքը՝ անոր հանդերձները չորս բաժին ըրին , ու ամէն մէկը մէյմէկ բաժին առին : Բայց անոր սպասմուճանին վրայ վիճակ ձեռքեցին , որովհետեւ , ասանց կարիէր , ու ասանկով՝ Վաւիթ ու Ասայի մարգարէներուն խօսքերը կատարուեցաւ , որ Յիսուսի մահուանը հանգամանքները գուշակելով ըսեր էին . « Օրակեցին զձեռս իմ և զոտս

ո ի մ , և Թուեցին զամենայն ոսկերս
 ո ի մ , նորա հայեցան և տեսին զիս :
 ո Քաժանեցին զհանդերձս ի մ 'ի մէջ
 ո իւրեանց , և 'ի վերայ պատմուճանի
 ո ի մոյ վիճակս արկանեին ո . Սաղ . իա .
 Լսայի . ծգ .

Օ ինսուորները Յիսուսի հանդերձ-
 ները բաժանելէն ետեւ , նստան որ
 Յիսուսը պահեն . Քահանայապետ-
 ները ու հրեից մէջէն շատ գէշ մար-
 դիկներ հան եկած ըլլալով՝ կը նախա-
 տէին ու կը հայհոյէին Յիսուսը խա-
 ջին վրայ : Օ ինսուորները՝ ու խաչուած
 աւազակներն անգամ անոնց հետ մէկ
 ըլլալով՝ կը նախատէին Յսր . Քայց
 յանկարծ մը՝ ան երկու աւազակնե-
 րուն մէկը՝ Լստուծոյ շնորհքովը աղ-
 դուելով՝ ըսաւ իր ընկերին . « 'Ի՞նչ
 ո Լստուծմէ չե՞ս վախնար , դուն՝ որ
 ոնոյն պատիժը կը կրես կոր : Մենք յան-
 ո ցանք ունէինք , անոր պատիժը կը
 ո կրենք կոր . բայց ասիկայ , գէշ բան
 ո մը ըրած չունի ամենեւին » : Լստքը
 Լստքը Յիսուսի դարձընելով՝ ըսաւ .

“Տէր, երբ որ արքայութիւնդ դաս նէ՝
 ”իս յիշէ՝ ” : Աւ Յիսուս՝ որ այնչափ
 նախատանացը բնաւ պատասխան մը
 չէր տուեր, աս մարդուն դարձին վը-
 րաց դժալով՝ ըսաւ անոր. “Անշուշտ
 ”դուն ասոր ինծի հետ արքայութիւնդ
 ”պիտի ըլլաս ” : Այս միջոցին, Յի-
 սուսի մայրը՝ ու երկու ուրիշ սուրբ
 կնիկներ, խաչին տակը կայներ կուլա-
 յին : Յիսուս տեսնելով անոնք, ու
 անոնց քով Յովհաննէսը՝ որ իր աշա-
 կերտաց մէջ ամէնէն սիրականն էր,
 ըսաւ իր մօրը. “Աին դու, ահա քու
 ”որդիդ ” : Աւ ետքը ըսաւ Յովհան-
 նէսին. “Ահա քու մայրդ ” : Ան ժա-
 մանակէն այս աշակերտը՝ կոյս Արիւ-
 ամը քովը առաւ ու անոր որդիութի
 կ'ընէր : Աւ երբ որ կէս օր եղաւ, եր-
 կիրը երեք ժամի չափ մթնեց. ու այն
 ժամանակը ըսաւ Յիսուս. “Օարա-
 ”ւի եմ ” : Օ ինուորներէն մէկը՝ քա-
 ցախ թաթիսած սպունք մը եղէգի մը
 ծայր անցընելով՝ Յիսուսի երկնցուց :
 Յիսուս քիչ մը բերանը առաւ, ու

ըսաւ . « Ալ ամէն բան կատարուե-
 յցաւ » : Այսքը մեծ ձայն մը ձգելով
 պօռաց . « Հայր , քու ձեռքդ կ'աւան-
 յ դեմ իմ հոգիս » : Աւերբոր աս խօսքը
 ըսաւ , գլուխը ծռեց ու հոգին տը-
 ւաւ : Այն վայրկեանին՝ տաճարին վա-
 րագուրը վերէն վար պատուեցաւ ,
 գետինը դողաց , ու քարերը ճրղքը-
 վեցան : Յիսուսը պահող զօրապետ-
 ները ու զօրքերը՝ գեանի դողալը և
 ուրիշ եղածները տեսնելով՝ ահ ու
 դողի մէջ ինկան , ու հարիւրապետը
 ըսաւ . « Անշուշտ աս մարդը արդար
 յէր , ու Աստուծոյ որդին » : Աւ բո-
 լոր բազմութիւնը կուրծքերնին ծե-
 ծելով գացին :

Յիսուս թէպէտ մեռած էր , բայց
 հրեայները ու զեցին որ բոլորովին ա-
 պահով ըլլան , ու մէկ զինուոր մը ե-
 կաւ , ու տէգով խոցեց անոր կողը ,
 ու անանկով ալ : Օչաքարիա մարգարե-
 ին գուշակութիւնը կատարուեցաւ ,
 որ ըսեր էր . « Աչվրնին իրենց խոցա-
 յ ծին վրայ պիտի նետեն , լան ու պի-

Կտի կոծեն Կ : Արքոր իրիկուն եղաւ ,
 հարուստ մարդ մը եկաւ Յովսէփ ա-
 նուն , որ հրէից Արեմադէմ քաղա-
 քէն էր ու ծածկաբար ալ Յիսուսի
 աշակերտած էր . համարձակութեամբ
 մը Պիղատոսին եկաւ ու Յիսուսի
 մարմինը անկէ ուղեց : Պիղատոս ալ
 հրաման ըրաւ որ Յովսէփին տան :
 Յովսէփ՝ մարմինը առաւ , ու Աիկո-
 դէմոս անունով ուրիշ աշակերտի մը
 հետ , պատնեց զանիկայ , խունկեր ու
 հոտեղէններ գործածելով՝ ինչպէս որ
 հրէից սովորութիւնն էր • Յիսուսի
 խաչուած տեղը պարտէզ մը կար , ու
 այն պարտէզին մէջ գերեզման մը՝ որ
 Յովսէփ փորել տուեր էր քարի մը
 մէջ . ու դեռ մէկը հոն թաղուած
 չէր • Յիսուսի մարմինը անոր մէջ դը-
 րաւ ու գերեզմանին բերանը մեծ
 քար մը գլորելով գնաց : Միւս օրը՝
 քահանայապետները ու ժողովուրդին
 ծերերը Պիղատոսին գացին , աղաչե-
 ցին , որ հրաման տայ , գերեզմանին
 բոլորը պահապաններ կեցընելու , որ

չըլայ թէ Յիսուսի աշակերտները
 գան ու անոր մարմինը վերցունեն :
 Պիղատոս անոնց հրաման տուաւ որ
 գիտցածնուն պէս ընեն , ու անոնք
 ալ ասպահովութեան համար գերեզ-
 մանը կնքեցին (մէօհրեցին) ու քովը
 պահապաններ դրին :

ԳԼՈՒԽ ԺԵ .

ՅԻՍՈՒՍԻ ԵՐԵՐԻՆԷՆԸ :

ՅԻՍՈՒՍԻ մեռնելէն երեք օր ետ-
 քը՝ սուրբ կնիկներ , որ աշակերտնե-
 թուն կարգը սեպուած էին , առաւօ-
 տուն կանուխ գերեզմանը եկան : Ի-
 րենց հետ անուշահոտ իւղեր բերեր
 էին որ Յիսուսի մարմինը օծեն , ու
 մեկզմեկու կ'ըսէին . « Ո՞վ պիտի վեր-
 ոցրնէ գերեզմանին բերնի քարը » . վա-
 սըն զի , մեծ ու ծանր քար մըն էր :
 Այժմ՝ ալ տասաիկ գեանաշարժ մը ե-
 ղաւ , ու Աստուծոյ հրեշտակը իջաւ
 երկինքէն՝ քարը գըլորեց ու վրան նըս-
 տաւ : Հրեշտակին երեսները փայլակի
 պէս լուսաւոր էին , ու լաթերն ալ

ձունի պէս ճերմակ : Պահապանները
անանկ տարաափեցան , որ մեռել դար-
ձան : Բայց հրեշտակը կնիկներուն
դարձաւ ու ըսաւ : « Մի վախնաք ,
» Հիմ խաչելէալը կը փնտռէք դուք ,
» բայց ան հոս չէ , յարութի առաւ ,
» ինչպէս որ ինք առաջուց զուրցեր
» էր : Գացէք , իր աշակերտներուն
» այսպէս իմացուցէք » : Այս սուրբ
կնիկները՝ վախով ու միանգամայն ու-
րախուժեամբ լեցուած՝ տեսածնին
աշակերտներուն պատմել կ'երթային .
մէյմ'ալ Յիսուս զիրենք գիմաւորեց
ու անոնց ըսաւ . « ողջոյն ձեզ » , ա-
նոնք ալ ոտքը ինկան համբուրեցին ,
ու անոր երկրպագութիւն ըրին : Ա-
նոր վրայ աներեւոյթ եղաւ : Ան օրը
Յիսուս , ուրիշ երկու աշակերտի ալ
երեւցաւ , որ Ամմաւուս գիւղը կ'եր-
թային . ու երկար ատեն խօսեցաւ ա-
նոնց հետ , ու անոնց հասկըցուց Սե-
սիայի մահուան ու յարուժեանք վե-
րաբերեալ մարգարէութիւնները : Ան-
րէն երեւեցաւ ուրիշ տեղ մը՝ ուր

առաքեալներն ու աշակերտները ժող
վրէր էին, ու ըսաւ անոնց, « ողջոյն
» ձեզի, ես եմ, մի վախնաք » : Այլ ու
րովհետեւ աշակերտները աղմկեցան
ու վախցան, Յիսուս ըսաւ անոնց,
« նայեցէք ձեռւորներս ու ոտվորներս,
» քննեցէք նայեցէք որ ես նոյնն եմ » :

Քառասուն օրի չափ Յիսուս շատ
անգամ երեւցաւ իր աշակերտներուն,
որ իր յարութիւն առնելը հաստատէ
ու իր վարդապետութիւնը լըմբնցնէ :
Անոնց ըսաւ, « ինձի ամէն իշխանու
» թիւն տրվեցաւ թէ երկնի մէջ և
» թէ երկրի վրայ, գացէք աշակերտե
» ցէք բոլոր հեթանոսները, մկրտե
» ցէք զանոնք՝ Հօր, Արդւոյ և սուրբ
» Հոգւոյն անուանովը, և ինչ որ ձեզի
» պատուիրեցի անոնց ալ բռնել տը
» ւէք : Այլ որ հաւատայ ու մըկրտու
» վի՛ պիտի ապրի, բայց ո՛վ որ չի հա
» ւատայ՝ պիտի դատապարտուի » :

Յիսուս աս վերջի պատուէրը տա
լէն ետեւ, աշակերտները առաւ դէպ
ի Մեթանիա տարաւ, ու հոն ձեռ


վրները տարածեց ու զանոնք օրհնեց ,
 և օրհնած ժամանակը՝ անոնցմէ բաժ-
 նուեցաւ ու երկինքը համբարձաւ . ա-
 շակերտները տեսան Յսւր՝ որ բարձրա-
 ցաւ ու ամպի մը մէջ մտաւ ու ծած-
 կըվեցաւ իրենց աչքէն : Արբոր ա-
 նոնք ասանկ աչվրնին տնկեր կը նայէին
 անոր , երկու հրեշտակ եկան ու ըսին
 անոնց . « ի՛նչ կայներ ասանկ երկինքը
 » կը նայիք : Յսւ , ի՛նչ կերպով որ հիմայ
 » կը տեսնէք Վոր վեր ելլելը՝ նոյն կեր-
 » պով օր մը նորէն զար պիտի իջնայ » :
 Այն ժամանակը՝ աշակերտները եր-
 կրրպագութիւն ընելով՝ ուրախութե-
 վըրուսաղէմ դարձան , ու անդադար
 տաճարին մէջէն չէին պակսեր , կ'օրհ-
 նէին ու կը գովէին զԱստուած : Քիչ
 մը ժամանակէն ետքը՝ այսինքն Պէնտե-
 կոստէի մեծ տօնին օրը՝ որ հրեայք ,
 Ագիպոսէն ելլելէն յիսուս օր ետ-
 քը՝ Սինայ լեռանը վրայ , Աստուծոմէ
 օրէնքները առնելուն յիշատակ մը
 ըլլայ տէյի կը տօնէին , առաքեալնե-
 րը ու աշակերտները՝ մէկ տեղ հաւաք-

ու եր աղօթք կ'ընէին, յանկարծ մը նր
 Հոգին վրանին իջաւ, ինչպէս որ Յս
 անոնց խոստացեր էր: Իսկոյն սկսան
 իրենց չի գիտցած օտար լեզուներովը
 խօսիլ, որ կը ցըցունէր թէ անոնք
 Քրիստոսի աւետարանը պարտական
 են ամէն ազգաց քարոզել: Ու նաեւ
 հրաշք ընելու կարողութիւնն ալ ըս
 տացան: Հրէաները ասոր շատ զար
 մացան, բայց սուրբ Պետրոս, որ ա
 ռաքեալներուն մէկն էր, այս հրաշ
 քին պատճառը անոնց հասկըցուց, ա
 նոնց իմացունելով՝ որ իրենց խաչած
 Յիսուսը, յարութիւն էր առեր, ու
 իրեն խոստմանը համեմատ՝ Հոգին նր
 վրանին իջեցուցեր էր: Բնաւ անոնց,
 որ անիկայ էր Տէրը ու Քրիստոսը ու
 միմիայն անոր անուամբը ու ասպաշխա
 րութեամբ փրկութիւն կը գտնուէր:
 Այս խօսքերուն վրայ 3000 հրէայք
 դարձան ու մկրտուեցան: Առաքեալ
 ները՝ և ուրիշ ով որ Հոգին սուրբը
 առեր էին նէ՝ բոլորովին փոխվեցան:
 Հասկըցան որ մարդիկ բոլորն ալ մե

դաւոր են , ու ամէնն ալ Աստուծոյ շը-
նորհքին կարօտ են , որ միայն Յիսու-
սի Քրիստոսի հաւատալով կ'ըստաց-
ուի : Այլ միանգամայն Աստուծոյ սիրո-
վը լեցուեցան , որ անոր պատուիրանք-
ները կատարելու՝ իրենց զուարճու-
թիւն մը , ու ճշմարտութիւնը վկայե-
լու՝ իրենց մեծ զօրութիւն մը կուտար ,
երբ որ չարերը իրենց դէմ կը կենային
ու զիրենք կը հալածէին : Քրիստոնէա-
կան՝ այսինքն Յիսուսի Քրիստոսի սբ
հաւատքը՝ այս սուրբ առաքելոց ձե-
ռօքը տարածեցաւ երկրի մեծ մասին
վրայ , և Աստուած ինքը զուրցեց որ օր
մը ընդհանուր աշխարհի վրայ ալ պի-
տի տարածէ զանիկայ :



ՅԼՆԿ



ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ	7:
ԳԼ. Ա. Աւետուհի	8:
ԳԼ. Բ. Մոգերուն Յիսուսի երկրպագութեան գալը	12:
ԳԼ. Գ. Յիսուսի յեզիպտոս փախչիլը	17:
ԳԼ. Դ. Յիսուսի տաճարին մէջ վարդապետ ներուն հետ խօսակցիլը	20:
ԳԼ. Ե. Քրիստոսի մկրտութիւնը	22:
ԳԼ. Զ. Յիսուս պզտի տղաքները քովը կը կանչէ	25:
ԳԼ. Է. Յայրոս Ժողովը պատիւն աղջկանը՝ յարութիւն առնելը	28:
ԳԼ. Ը. Քնի հինգ հացով ու երկու ձուկով հինգ հազար հոգի կշտացնելը	31:
ԳԼ. Թ. Յիսուսի Թափօր լեռը այլակերպիլը	36:
ԳԼ. Ժ. Յնի Ղազարոսին յարութիւն տալը	38:
ԳԼ. ԺԱ. Յիսուսի երուսաղէմ մտնելը	40:
ԳԼ. ԺԲ. Ընթրիք	45:
ԳԼ. ԺԳ. Յիսուս իր խաչը բարձեր կը տանի	52:
ԳԼ. ԺԴ. Յիսուսի խաչուիլը	58:
ԳԼ. ԺԵ. Յիսուսի յարութիւնը	64:







